զոպտուում են բռնաւոր պարսիկներից, խաներից և լեզգիներից։

Վերջին խանը լինում է Մուստաֆան, որ Աղա Մուհամմատ շահի Ղարաբաղում 1795 թ. սպանելուց յետոյ, քաղաքը Աղսու անուանուած տեղից տեղափոխում է Ֆիթզաղ, ուր լեռնոտ լինելով՝ ապահովում է քաղաքը։ Հին Շամախի քաղաքը Աղսու տեղափոխելու պատճառը վերաբերում են Շահթահմազ Ղուլի խանին, որ և կոչւում էր Նատիր Շահ, 1736 թ., որ զայրացած լինելով Շամախի քաղաքի բնակիչների վերայ՝ որոնց՝ փոխանակ սրոյ ճարակ տալոյ՝ տեղափոխել է Աղսու[1]) անունով գիւղը, որ իրանք իրանց կոտորվեն օդի և ջրի վատութիւնից։ Աղսուն օդով, ջրով և կլիմայով շատ վնասակար է որպէս և այժմս իսկ. միշտ բնակիչների որովայնը ուռած փքուած և պարանոցները տանձի կոթի նման բարակած. միշտ դեղնած դունատուած են մարդիկ և սակաւակեաց. մինչև այժմս էլ առած է Շամախում, որ հիւանդ, նիհար, դեղնած, պարանոցը (վիզը) բարակած, որովայնը փքուած մարդու համար ասեն. «Ադ հինչ աս իլալ. Աղսուեցի քի չմս»։

Մուստաֆա խանը երբ հին Շամախի քաղաքը Աղսուից տեղափոխում է Ֆիթզաղ, որ բարձրաւանդակ, լեռնոտ և թըշնամիներից ապահով տեղ է, որ գտանվում է Կովկասեան լերանց շղթաներում, որ մերձաւորապէս 40 վերստաչափ հեռաւորութիւն ունի հին Շամախի քաղաքից, բնակիչների հետ միասին տեղափոխվում է այն տեղ և խան Պօղոս բէկը, ուր բաց է անում իւր մետաքսեայ գործարանը[2]) և իւր գործակատարների միջոցաւ մեծ քանակութեամբ մետաքսեայ գործուածներ է ուղարկում Ռուսաստան, Տաճկաստան, Պարսկաստան և Հընդկաստան։ Ուղարկում է Ռուսաստան մեծ քանակութեամբ և տո-

---

[1]) Տես Արրահամ կաթուղիկոսի պատմութիւնը և գրքիս մէջ յիշես 273

[2]) Մինչև ցայսօր էլ խան Պօղոսի գործարանը գործում է Բասխալ գիւղում Ֆիթզաղի մօտ, ինչպէս և Շամախի քաղաքում։